

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

623

L - 37

Վ. 1,6691-ՆՕԿԻ

ԶՐՈՒՅՑՑՆԵՐ  
ԴԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ  
Մ Ա Ս Ի Ն

ԳԵՂԱՔԱՑ

1931

ՅԵՐԵՎԱՆ

13107

06 AUG 2010

Վ. Լեռտենովի

623. Կ.


L-37

ԶՐՈՒՅՑՆԵՐ  
ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

9046

82 նկարով

Թարգմ. Պ. Աթանասյան




15896-52

10 SEP 2013

ԳԵՏՔՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ  
Գլավիտ 6599(բ)  
Գատվեր № 4388  
Տեղաք 7000

ԼԿՀՀԽՆԱԿԻ — «ԶՐՈւյցներ ուազմական տեխնիկա-  
յի մասին» : Այս գրքույկում բացատրվում ե ուազմա-  
կան տեխնիկայի հսկայական դերը ապագա պատերազմ-  
ներում և պատմվում է, թե մարտական աշխատանքի  
ժամանակ ինչպիսի՞ տեխնիքական միջոցներ գործա-  
դրություն կունենան, թե ինչպես նրանց ավելի լավ  
ողագործել թշնամուն հարվածելու համար ու ինչպի-  
սի միջոցներով նրանց դեմ կռվել: Գրքույկը ծանո-  
թացնում ե ընթերցողին նաև այն պահանջներին, վո-  
րոնց առաջադրում և ուազմական տեխնիկան ժամանա-  
կակից մարտիկին: Գրքույկը գրված ե պարզ ու աչ-  
խույժ լեզվով, հաջող առնելով կարմիր բանակային  
ընթերցողին: Բազմական տեխնիկայի հարցերին ավելի  
լավ ծանոթանալ ցանկացող ընթերցողին ողտակար կը-  
լինի կարգութ նաև վ. Վնուկովի գրքույկը — «Ահեղ և  
արդյո՞ք ձեզ համար ուազմական տեխնիկան» :

---



## ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վաշտը հրաշալի կերպով հաղթահարեց նոր դասընթացի № 1 հրաձգային վարժությունը. գնդի վաշտերի միջև կնքած սոցիալիստական մրցակցության սրարմանադրի պահանջները վաշտը դերակատարեց քսան առանձին կոսով։

Ահա թե ինչու մարտիկները, հրաձգարանից վերադառնալիս, ուրախ եյին քայլում, այստեղ ել գերաքայլելով կանոնազրքով սահմանված «120 մեկ րոպեյում» ժամանակ-առժամանակ սյունի դլիսից կատակի ձայներ եյին դալիս։

— Քայլի «կարճուկներ», յետ մի մնա,  
Ժամանակները» պատասխանում եյին

— Տուր, հուալ տուր : — Քայլում ենք, ինչպես կը առ կում ենք :

Հատկապես վատահ քայլերով դնում եր հարվածային կրուտով : Այսոր նրա թիրախն իր մոտ հավաքց բոլոր վաշտերի հրամատարներին : Չորսից չորս դիպումները ծածկել եյին թիրախի սև կիսաշրջանը, ինչպես ճանճերը մի կտոր շաքար : Այդ եր հրաձգությունների նոր դաշնթացի նշանավոր առաջին վարժությունը :

— Ահա, թե ինչպես պետք եւ կրակել . հավանությամբ ժպտալով ասեց քաղղեկը :

Կրուտով վերհիշելով այդ խոսքերը, ժպտաց դեպի եր կողքին դնացող Պէյուկինը, վորն ընդունեց նրա ժպիտը իբրև ծաղր իր վրա :

Հերթական անհաջողությունը — այսորվա հրաձգության ժամանակ նրա վրիտումները — ծանր քարերի նման կախվել եյին Պէյուկինի վուներից : Հիմա, յերբ վաշտը քայլում եր առնվազն «130 մեկ բոսկեյում», նա բոլորվին թուլացել եր և ամեն քայլում դայթում եր :

— Տուր ողնօմ . — կրուտով ձեռքը մեկնեց դեպի Պէյուկինի հրացանը :

— Առանց քեզ ել յոլա կդնա . — բարկացած փընթիւնթաց Պէյուկինը :

Ճանապարհների խաչմերուկի վրա վաշտը կանգ առավ, վորպեսզի հնարավորություն տա անցնելու զրահութերի ջոկատին, վորը գալիս եր դեպի նրանց : Տանկերը, ամուր պողպատե զրահը հաղած, ծանր մոտենում եյին վաշտին :

Վաշտի հրամատարը մի քիչ խոսեց տանկերի ջոկատի հրամատարի հետ, կանգնեցնելով նրա ավտոմոբիլը ձեռքը բարձրացնելու միջոցով : Նա գլխով արավ,

իուրս թուավ ավտոմոբիլից և նշան ավեց դեպի տանկերի կողմը :

Վերջին յերկու տանկը կանգնեցին :

— Առաջին դասակը և յերկորդի յերկու ջոկը վերջին տանկի մոտ, մնացածներն առաջավորի մոտ — կարգադրեց վաշտի հրամատարը :

Մարտիկները շրջապատեցին տանկը : Տանկիսոների հրամատարը, կռանելով վեպի տանկի առջելի սլամը, արագ մի բան ասեց : Պողպատե հրեշի առջելի պատը կամաց բարձրացավ, և տանկից գլուխով կամաց կամաց բարձրացավ : Նրա յետեղում կախած փողուրս հանեց տանկավարը : Նրա յետեղում կախած փողուրս հանեց մարդ եր նստած : Դա տանկի հրամատարն եր :


— Մոտ յեկեք, ընկերներ, մի քաշվեք . — դուրս յեկավ տանկի հրամատարը . — Այս մեքենան մարտում շատ անդամ կողնի ձեզ :

Կարմիր բանակայլները նեղ շրջապատեցին տանկը, և հրամատարն ակսեց իր բացատրությունները :

Տանկն սպառապիլնած և թնդանոթով ու գնդացերներով ձիչտ ե, տանկից կրակելը շատ անհարմար ե, լավ չի յերեկում և շատ և թափահարում : Այդ պատճառով կրակի դիպուկության տեսակետից տանկը չի կարող հավասարվել ձեզ հետ : Բայց տանկի ուժն այն է, վոր նա իր զբահով պաշտպանված և ամեն մի գընդակի պակի բեկորից : Տանկը համարձակ կերպով կարող ե անցնել ամենառուժեղ հրացանային ու գնդակարող ե անցնել ամենառուժեղ հրացանային զիրային կրակի միջով, հակառակորդին գնդակոծելով ցիրային կրակի միջով, հակառակորդին գնդացիրներով : Հենց Հեկիայի մոտիկից թնդանոթով և գնդացիրներով : Հենց Հեկիայի տեսեք, թե ինչ գեղքերում տանկը հատկապես կողնի ձեզ :

— Ծերբ հակառակորդն ուժից կրակ և քաշում շահ նկատեց մեկը:

— Ճիշտ եւ . . . հաստատեց. տանիիստը — կրակով ուժեղ թշնամուն զրոհելը կապված է մեծ կորուստների հետ: Հենց այստեղ ել ոգնության են դափիս տանկերը, վո-



Նկ. 1. Տանկը գնում եւ կորուսկ վայրով

բանք չեն վախենում վոչ հետեվակի կրակից, վոչ եւ շրապնեներից: Գրոհի ժամանակ նրանց ուղարկում են հետեվակի առջելից: Հակառակորդի կրակն իրենց վրա գրավելով, տաճկերը ենց դրանով եւ հեշտացնում ուն հետեվակի առաջ շարժումը: Նրանք, ներխուժելով թթւնամու դասավորության ներսը, վոչնչացնում են նրա կրակային կետերի խոշոր մասը, մասույցների վրայի արհեստական արգելաքները և բայցայում են թշնամու շարքերը: Տանկերի յետելից գնացող հետեվակն ել լուծում եւ մարտն արդեն անմիջորեն ձեռնամարտի բըռունկելով հակառակորդի հետեվակի հետ:

— Աւրեմն տանկը հրետանու, նման . . . ճանապարհ և բացում . . .

Լուլ եւ . . . Հայվանությունը բացականչեցին հըմձիրուն նկատեց, զնում և իրա համար եւ վոչ մի բանի չի նաս յում . . .

— Շատ ել այդպես չեւ . . . ժպտաւով ասաց տանկիստը, տանկը մահացու թշնամի ունի — դա հրետանին եւ: Նրա նոնակը ծակում անցնում եւ տանկի զրահը: Տանկի շարժման ժամանակ նրա ճանապարհը կարելի յե կորել ամեն տեսակի արհեստական արգելքներով: Մոտ յերկու մետր լայնություն ունեցող սովորական առումները, իրամատները, փոսերը, նույնպես և փոքր բարձունքները, մինչև 40 տատիճան թեքություն ունեցող լանջերով, տանկը կանցնի: Նույնիսկ չահել անտառող նրան չի կանգնեցնի: Այդ բացարարիում եւ նրանով, վոր տանկը թրթրաձեխ ընթացք ունի: Տանկը կանգնած վոր տանկենում եք, յերկու պողպատե ժապավենների վրա, վորոնք կոռցվում են թրթուրներ: Սրանք շարժելի վրա, վորոնք կոռցվում անիվների ոգնությամբ, և տանկը, վում են ատամնավոր անիվների ոգնությամբ, և տանկը, թրթուրների շնորհելի, ազատ անցնում եւ այնպիսի ան-թափառ տեղերով, վորուղ ամենելին չեն կարող անցնել անլավոր սալլերը: Բայց բավական են նրա ճանապարհին սարքել մի քողարկված թակարդ — լայն փոս կամ խանդակ, այդ նրա մահը կդառնա, այնտեղից ել գուրս չի գա: Կան համե ուրիշ միջոցներ, բայց ամենից շատ, ինչպես յես ձեզ արդեն ասեցի, տանկը վախում եւ հրետանուց: Զեր զնդակը, յեթե դիմում վախում չի կարող պատճառել նրան:

Գործարանից բաց թողնելիս, ստուգում են յուրաքանչյուր զրահասալի (զրահի թերթի) անթափանցելիությունը (գնդակի ծակելուն դիմադրության ընդունակությունը): Ահա տեսեք այս մասը, հաղիվ տեսանելի նշանները: Դրանք գնդակների հետքերն են: 9

Հըաձիղներն աչքերը սեվեռած լուռ նայում եյին  
զրահին : Կրուտովլը խորը մտածմունքի մեջ ընկավ : Լարա  
վածությունից նույնիսկ մի ժաւք ընկավ հոնքերի միջն:

— Ապա, տղա յես, փորձիր, տանկի դեմ դուրս արի  
քո «չորսից չորսով» : — Գեղնեց նրան, Պէյոլինը :

Կրուտովլը հանդիբոտ աչքերը վոլորեց :

— Ընկեր հրամատար, բուրժուազիան այս տանկե-  
րից շա՞տ ունի հարցրեց նա:

— Բավկականին ունի: Որինակ, Անդիայում շատ հն  
չարքում, վոր այսպիսի մեքենաներով փոխարինեն  
սովորական բանակը : Դրանից մինչեւ հիմա վոչինչ գուրս  
չի յեկել և դուրս ել չի դա: Յեվ ահա թե ինչու: Տանկը  
ինքն իրեն չի կարող իր ձեռքում պահել դրաված վայ-  
րը: Այդ կարող ե անել միմիայն հետեվակը: Այդ մեկ:  
Հետո տանկը չի կարող յերկար ժամանակ աշխատել ա-  
ռանց ընդհատումների, նրան բենջին պիտի տաս: Այդ  
յերկու: Պատերազմն ել ճանապարհներին չի նայում.  
Կոփլը տեղի յե ունենում ամբողջ տարածության վրա,  
անիսին նրանից թե սարեր են, անուառ ե, ճահիճ ե,  
դաշտ ե, —միմիայն թե մարդ կարողանա անցնել: Պարզ  
ե, վոր միմիայն տանկերով վոչինչ չի կարելի անել,  
պետք ե ունենալ հետեվակ, վորի մարտիկներն ամեն  
տեղ կանցնեն: Հարց ե ծագում, թ ինչո՞ւ բուրժուա-  
զիան ամեն կերպ աշխատում ե բանակում, վորքան հը-  
նաարվոր ե, շատ մեքենաներ ունենալ:

— Եթե մեքենաներ լինեն, այն ժամանակ ավելի  
քիչ ժարդ հարկավոր կլինի, —պատասխանեց կոմյերի-  
տական վորնիկովը:

— Այդ ճիշտ ե, բայց ինչո՞ւ բուրժուազիան աշխա-  
տում ե այդ ուղղությամբ: Ի՞նչ ե, նա ափսոսում ե ժո-  
ղովրդի արյունը թափել:

10

— Նրանք չեն ափսոսալ:

— Նրանք ծովերով արյուն կթափեյին միանդա-  
մից աղաղակեցին ամեն կողմից:

— Ուրեմն բանն ինչո՞ւմն ե:

Դուրս յեկավ նույն Վորնիկովլը:

— Յես այսպես եմ կարծում, Ընկեր հրամատար,  
վոր բուրժուազիան շատ ել չի հավատում իր զինվո-  
րեն: Այսը, չե վոր բուրժուազիան բանակները դլխավորա-  
պես բաղկացած են բանվորներից և գյուղացիներից—  
կազմակեցին դաստիարակյան թշնամիներից . . . .

— Ահա, հենց այդ ե —միջամտեց տանկիստը: —  
Հենց այդ պատճառով եւ բուրժուազիան տեխնիկայի  
պոչիցն ե բռնել: Դոյցություն ունին մի քանի զանազան  
տեսակի տանկեր, այսպես ասած մարտական կյանքի  
տարբեր դեպքերի համար: Բուրժուազիան ամբողջ ջո-  
կատներ ե տոեղծում տանկերից, զրահավատումորիներից  
և ինքնաշարժ թնդանոթներից: Դրանք կոչվում են մե-  
կանայցրած ջոկատներ: Ապագայի կովում հակառա-  
կութը լայն չափով կողմտագործի այլայիսի ջոկատնե-  
րը, և մենք պետք ե պատրաստ լինենք դրա համար:  
Տանկերը մասնակցություն կունենան թշնամու հետե-  
վակի դրուներին, նրանց կամ զրահավատումորիկների  
վրա յել կհենավի նույնպես թշնամու հեծելազորը . . . .

— Ընկեր հրամատար, —խոսքը կտրեց Կրուտո-  
վլը, —իսկ զրահավատումորիկի դեմ նո՞ւյնպես թուլլ ե  
հրացանային գնդակը:

— Գնդակով նրա զրահը չես վերցնիլ, ժպտալով  
պատասխանեց տանկիստը Կրուտովլին, —բայց գնդակի  
համար առանց այդ ել բավականին նպատակներ կան:  
Ժնամու տեխնիկային պետք ե պատասխանել սեփա-  
քնամու վեխնիկայով: Ահա թե  
կամ, վոչ պակա ուժ ունեցող տեխնիկայով:

Թիշու Առրջեղային Մէության պաշտպանության համար այդքան կարելոր և յերկրի ինգուստարացման հաջող զարդացումը։ Նոր Փարբիկների և դործարանների կառուցումը մեղ հնարավորություն կտա թշնամու յուրաքանչյուր մեքենային սլատասխանել մեր մեքենայով։ Այս տանկը, վոր գուք տեսնում եք, ամրողովին կառուցված և մեր գործարանում։ Այսպիսով յեթե ձեր դնակը, — դարձավ տանկիստը կրուտովին, — չի յել ծակի թշնամու տանկը, հակառակորդի գնդակներն ել իմ տանկի համար վոչ մի նշանակություն չնն ունենա։

— Իսկ, ընկեր հրամատար, այդպիսի մեքենայից կաղմած ջոկանները... ինչպես են դյուրաշարժության նկատմամբ։ — Հարցրեց Պչյուկինը։

— Այդպիսի ջոկատը որուզիչերվա ընթացքում կարող ե անցնել 100 կիլոմետր, այսինքն յերեք անգամ առվելի չատ, քան գուք։ Ջոկատը շարժվում ե մեկ ժամում մինչև 25 կիլոմետր արագությամբ։ Այնպես վոր թեվին, թիկունքին հարվածելու տեսակետից, թևանցումների, թիկունցումների տեսակետից առհասարակ անսպասելի կերպով վրա տալու տեսակետից — այդպիսի ջոկատները կդերագանցնեն վոչ միյան հետեւակից, այլ և հեծելաղորից։

— Դեհ, ինչպես ե ձեզ մոտ — լավեց յերկրորդ տանկի մոտից, — բացատրեցի՞ք։

— Այո, համառոտ ծանոթացանք, — պատասխանեց տանկի հրամատարը։

— Տեղերդ — հրաման տվավ վաշտի հրամատարը։ Հրաձիգներն արագ շարժվեցին։

Տանկիստները մտան իրենց մեքենաները։

— Ապա նայեցիք նրանց ընթացքին, — դոռաց ալտումբիլց զրաւութերի ջոկատի հրամատարը։ Տանկերը

մասկուտեցին Հողն իրենց թթուրներով ու արտադ դնաց ցին մեկը մյուսի հետեւից, ճանապարհի կողքից զնաւ ցող յերկանմին առաջն ընկնելով առանց դժվարության։

— Հա, զա մեր «120-ը մեկ բռապեյում»-ի Բայը չենկատեց Պչյուկինը։

— Քայլով մա'րչ։  
Վաշտը շարժվեց։

## ՎԵՃ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Զորանոցում հրաձգարանից վերադարձած մարտիկ ների աղմուկն եր կանգնած։ Հրաձիգներն աղմուկ եյին բարձրացրել, տաքաշած խոսելով որվա պլանների մասին։ Սովորականի նման նրանց զրադեցնում եր վոչ թե հրաձգությունը, վորն այլպես հաջող անցավ այսոր։

Վեճերի ամենատաք ժամանակ ներս թուալ Ստրոմինը, վաշտի խմբկուլեղիայի անդամը։

— Ընկերներ, այդ ի՞նչ ե, մինչեվ հիմա վոչ վաք հարված չի տվել հրաձգության մասին։

Ստրոմինի վրա վոչ մի ուշադրություն չդարձրին։ Նույնիսկ Պչյուկինը, վորն ամենից հաճախ եր ընկնում իլյէչովիկի «Մեր պոչերը» բաժինը, և միշտ մեծ հուզմունքով եր վերաբերվում վաշտի թերթի կազմելուն, հիմա, կարծես թե, չնկատեց խմբադրին։ Նա նեղում եր կրուտովին, վորին պաշտպանում եյին մյուս հուրվածայինները։

Պչյուկինի կողմը պահում եյին նրա նմանները, «վաշտի պոչերը», անդելով, վոր այժմյան մարտում հարկավոր ե վոչ թե լավ մարտիկ, այլ լավ տեխնիկա։

— Ենթադրենք, դու գնդակը գնդակին ես դիպ ցնում, իսկ իմ պնդակները բոլորը պատպւնց տունն են

գնուած<sup>9)</sup>)—ստաքացած տառում եր Պչյոլկինը, —ինչ տարբերություն կա մեր միջն, յեթե մեզ վրա տանկեր են հարձակվում:

— Ախր մենակ տանկերը չեն. — չեր համաձայնվում կրուտովը:

— Տարրինակ մարդ ես—մենակ չեն: Կարեվորն այն ե, վոր նրանք արդեն գործում են մարտում: Եեվ ամեն տեղ, վորտեղ կոփվն ալելի լուրջ և տաք լինի, այնտեղ անպայման դործի կդրվեն տանկերը: Դրանց եւ ավելացրու մեքենայացրած ջոկատները, յերբ շարժվում ե միապաղաղ դրահը: Եեկ մի փորձի, քո սիայպերներով նրանց վրա գնա:

— Բա մեր տանկերն ի՞նչի համար են. — խոսեց հարվածայիններից մեկը, — նրա տանկի դեմ մենք կուղարկենք մեր տանկը:

— Խոսքը հենց դրա մասին ե — միջամտեցին «պաշերը», «տալիս ես տանկ»—ահաթե ինչ ե հիմա հրակավոր, իսկ ինչ վերաբերվում է հրածիդներին, բանց դուրս ե գալիս, վոր դրանք, կարծես թե, յերկրորդ կարգի բան են դատնում:

— Ախր տանկիսուր քեզ ասեց—համողում եր կրուտովը, — նրանք առանց մեզ յոլա չեն գնա: որինակ, գրաված վայրն ամրացնելն ո՞վ պիտի կատարի, քեռի ջան:

— Պահ, ամրացնել. պատրաստին դրավելը մենք ել Պչյոլկինի հետ միասին կանենք, քեզնից յետ չենք մնա:

— Այ անրան մարդ, — նկատեց Վորնիկովը, — դու հենց այն ես ուղում, վոր տանկով քեզ պաշտպանես.

— Դու փաստով համոզիր, և վոչ թե հաջիր, — միշտամտեց Պչյոլկինը: — Ապացուցիր, վոր տանկի դեմ դու

ավելի շատ կանես, քան թե յես: Եես դրա համար եմ տառում, վոր հիմա պատերազմում բանը մեղանից չի կախված: Հիմա ուժը տեխնիկայի մեջ ե:

— Իսկ դու լսել ես, — ծիծաղեց Վուտնիկովը, — թե ինչպես մերոնք քաղաքացիական պատերազմի ժամանակ ջարդում ելին սպիտակներին.

— Լավ ելին ջարդում:

— Իսկ ո՞վ ավելի շատ տեխնիկա ուներ:

Պչյոլկինը լուռ մնաց:

— Հենց բանն ել դրանումն ե:

Եեճի ընթացքում տաքացած հրածիդները չկատեցին ել, թե ինչպես նրանց մոռեցավ քաղցելը:

— Ընկերներ, — միջամտեց նա խոսակցությանը, — ի հարկե, ճիշտ ե, վոր պատերազմում տեխնիկան մենցեր պիտի խաղա, բայց այնուամենայնիվ միմիսայն տեխնիկայով շատ ել հեռու չես դնա: Այդ ցուց տըսվեց թե համաշխարհային և թե քաղաքացիական պատերազմը: Տեխնիկայով սպիտակները մեղմից ավելի ուժեղ ելին: Մանավանդ Վրանդելը և սպիտակ լեհերը, վորոնց իմակերիալիստները մատակարարում ելին թե ունկեր և թե ինքնաթիռներ: Բայց ե այնպիս մենք նրանց ջարդեցինք: Զարդեցինք այն պատճառով, վոր կարմիր բանակը, բայցի հրացաններից ու զնդացիրներից, բայլ սպառազինված եր սրած զենքով — քաղաքական գիտակցությամբ: Այդ տեսակետից Կարմիր բանակն ահազին առավելություն ուներ: Այդ միակ բանակն եր, վորը խորը դիտակցում եր, վոր կովում եր իր շահերի համար, աշխատավորների շահերի համար: Իսկ ի՞նչ կստացմինը, յեթե Կարմիր բանակն իր բարձր քաղաքական գիտակցության հետ միասին ունեցել եր նաև բարձր տեխնիկա:

\*) միապում են.

— Նբանց ջարդելն ավելի հեշտ կլիներ :

— Ձեւշո ե ; Յեթե մենք մի քիչ ավելի ուժեղ պետք նիկա ունենայինք, մենք նրանց ջարդումիշուր կանչինք և ավելի շուտ, և ավելի քիչ կորուստներնիւ : Տեխակիան կուլում շատ և ողնում : Բայց և այնպես տեխնիկան մի-միայն ողնում ե :

— Ինկեր քաղղեկ, ո նկատեց Պէյուկինը, — յեթե տեխնիկան շատ և ողնում ; ուրեմն շատ ել կարեվո՞չ չեւ-թե մարտիկը լավ և կատ թույլ ե :

— Ապա դուք ինքներդ դատեցեք — ձեր հրայտանը, որինակի համար, չեւ վոր դարձյալ տեխնիկա յեւ . . .

— Դեհ, զա ինչ տեխնիկա յեւ :

— Դա հասարակ հրացան ե . . . միանդամից դրա բերեցին մի քանի հրածիգներ :

Քաղղեկը ժպտաց :

— Ապա ասացեք, գնադացիրն ել չեք տեխնիկա հա-մարում . . . որինակ, «Նեկույարելինը», վորը մինչեւ հի-մա չեք կարողանում լավ յուրացնել : Այդ ել տեխ-նիկա չեւ :

— Վոչ, այդ խկացես տեխնիկա յեւ :

— Իսկ տարբերությունն ինչումն ե : Նույնակի հրացան ե, նրա փամփուշաները նույնն են, միայն կա-րող ե մեկ բռպեյում ավելի մեծ քանակությամբ դրա-դակ արձակել, քան հրացանը : Ուրեմն բանն ինչումն ե : Ինչո՞ւ գնդացիրը տեխնիկա յեւ, իսկ հրացանը, զոչ :

Մարտիկները ծիծաղեցին :


— Ամբողջ տարբերությունը նրանումն ե, վոր հրա-ցանն ավելի հասարակ տեխնիկական միջոց ե, իսկ դրա-դացիրը — ավելի բարդ : Լավ դիմուկ հրածիգին հրացա-նը ահատդին ծառայություն կմատուցանի : Կրուտովի ձեռքին հրացանը ահում ե անփոխարինելի զենք ե, իսկ

ձեր ձեռքին, ընկեր Պէյուկինն, նա այսօթմ շատ ել պար-սակելի չեւ :

Մարտիկները բոլորը ծիծաղեցին : Բայց Պէյուկինը անձնատուր չեր լինում :

— Պարզ բան ե, վոր լավ հրածիգը հՀաղթի վատին, խոսեց նա, — թույլ ողաչուն նույնական թող ուժեղի ձեռ-


2046



Նկ. 2. Գեկայաբեկի ձեռքի զնդացեը

քը չընկնի : Բայց մի բան կա, ըկեր քաղղեկ : Եւրը զուրս յեկան սավառնակները, տանկերը, գագերը, դրա-հավտումորիլիները, հրետանին, գնդացիրները, միթե նրանք չեն կարող լրացնել, ծածկել մեր - հետեւակ հրածիգի կամ հեծելակի թույլ աշխատանքը :

— Ուրեմն, այլ խոսքով ձեզ հետաքրքրում ե մի հարց : Հարկամաս և արզյո՞ք հետևիակի և հեծելա-զորի մասամբ անդի լավ ուսուցումը, յեթե մենք ուժեղ



17

15896 - 52

տեխնիկա ունենք. կամ տանկեր, սավառնակներ, գաղեր և կովի այլ ամենանոր միջոցներ ունենալիս, կարելի յի, ի հաջով նրանց պահության, դործ անել ավելի թույլ մարտիկներով:

— Հենց այդ եմ ասում, — պատասխանեց Պէյոլինը:

— Քեզի յե փնտում, — նկատեցին մյուսները:

— Բնկեր Պէյոլինը շատ լուրջ հարց տվեց: Բոլոր յերկրների կապիտալիստներն ել մտածում են հենց այդպիսի «քեռի» գտնել, վորն աշխատի ուրիշների տեղը: Նրանք յերազում են նույնիսկ, վորապես միլիոնավոր բանվորներից և դյուրացիներից բաղկացած մասսայական բանակները փոխարինեն սավառնակներով, տանկերով և դրահավատություններով, նրանց վրա նստացնելով իրենց — հարուստներին. Հավատարիմ մարդկանց . . .

— Դրանք վոչ մի բան դուրս չեկալ. — նկատեց Վորնիկովը, հիշելով տանկիստի խոսքերը:

— Ճիշտ ե. — ծիծաղից քաղցեկը: — Առայժմ կառուցելով ամեն տեսակի տանկեր, սավառնակներ և այլ տեխնիկական միջոցներ, բուրքուազիան միաժամանակ ամեն կերպ աշխատում ե նույն հետեւակեց, վորքան հարավոր ե, շատ ու լավ սովորեցրած մարտիկներ պատրաստել: Յեթե մենք աչքի տակով անցկացնենք ամեն մի բուրքուական բանակի կանոնագիրքը, կտեսնենք, վոր այսորվա ռազմական տեխնիկայի ամբողջ հզորության հետ միասին, այնուամենայնիվ դորքերի հիմնական տեսակը մնում ե նույն հետեւակելը: Բոլոր յերկրներում դիմումած ուժերի գլխավոր մասսան կազմում են հետեւակելը և հեծելաղորը: Իսկ յեթե կոփիլը հիմնականում մղվում ե հետեւակելի ու հեծելակի ձեռքերով, ինքն իրեն հասկանալի յէ, վոր թույլ պատ-

ըստաված հետեւակելն ու հեծելաղորը, ուժեղ տեխնիկա ունենալիս ել, միշտ անհաջողություններ կլրեն:

— Այդ, իհարկե, այդպիս ե — վերջապահ համաձայնլից. Պէյոլինը, — բայց յեթե հարկ լինի տանկի դեմ դործել, միկնույն ե, նույնիսկ լավ հրաձիգն ել վոչինչ չի կարող անել . . .

— Այդ այնքան ել ճիշտ չե: Իհարկե, հրաձիգի սովորական գնդակը չի ծակել տանկի դրահը: Բայց ե այնպես տանկերի դեմ կովելու համար կան մի շարք այլ միջոցներ, վորոնք մարտիկի հատուկ ուսուցում են պահանջում: Այդպես են վոչ միայն տանկերի դեմ կըովելու միջոցները: Տեխնիկական միջոցները, յուրաքանչյուրն իր հերթին բարդացրել են սավմական գործը, և ոազմաքաշները պահանջում են իիմս ավելի լավ վարժված մարտիկներ, քան առաջներում: Մեզոնից յուրաքանչյուրին անհրաժեշտ ե լիմանալ, թե ինչպիս պետք ե վարդել դաշտերում՝ տեխնիկայի այս կամ այն միջոցի հանդես գտնու դեպքում: Այդ միջոցներին բայց ծանոթանալու համար, մենք կհազմակերպենք տեխնիկական արշավ: Վայր գնդի հրաձային կարինեառում կիսունք գնդացիրների մասին, հետո հրետավորները մեզ կծանոթացնեն իրենց գործին: Իսկ հետո կարշավինք ողացուների, քիմիկոսների, տանկիստների, գենիթայինների, կապալորների և ճարտարագետների մոտ: Համաձա՞յն եք:

— Համաձայն ենք. — ուրախացան հրաձիգները:

— Ուրեմն, այդպես, մինչև վազը, ընկերներ:

## Գ Ն Դ Ա Ց Ի Ր Ն Ե Ր

Գնդի հրաձային կարինեառ բուրուսովին լեկեցուն եք:

Ճիշտ ե , մարտիկներից վոճառք այսաւել ելին յեւ  
կել առանց՝ վորեւե ցանկության : Գնդացիրը , գնդի  
վարժական կյանքի մշտական ուղեկիցը , Հիմա քիչ եր  
հետաքրքրում , յերբ Հարցը տեխնիկայի մասին . եր  
դրված : Մարտիկներին թվում եր , վոր գնդացիրների  
մասին , վորոնք ուսումնասիրված են մինչև վերջին  
ամենափոքր մասնիկը , չի կարելի վորեւե հետաքրքրու-  
կան բան լսել :

Պատերի վրա կախված պլակատները՝ բուրժուական բանակներում յեղած գնդացիքների նկարներով զարձյալ արտասավառ փոշիչ չեցին տառւմ : Նրանց ծանր (մեր լեզուով հաստոցալոր) և թեթև (մեր լեզվով ձեռքի) գնդացիքներն իրենց արագությամբ ու լրացի հասողությամբ համարյա թե վաչով չեցին տարբերվում մեր գնդացիքներից :

Վաշտի հրամատարը լսվ հաշվի առավ մարտիկ-նը արամադրությունը :

— Զեզ, ընկերներ, ճանճռուի յե թվում, վոր մեր  
«տեխնիկական արշավին» սկսվում և զնդացիրների ժամկն  
խոսակցությունից : Բայց ինչ անենք, — ձեռքիրը տարա-  
ծեց զեկուցողը, — բանը նրանումն է, վոր մարտադաշ-  
տերում մեծ քանակությամբ տեխնիկայի հանդես դարձ  
պատճառներից մեկը հենց այս զնդացիրներն են, — ցույց  
տվակ վաշտի հրամատարը զեպի այստեղ կանգնած Մաք-  
սիմի և Դեղտյարեկի զնդացիրները : Դեռ այդ քիչ է :  
Այն մարտակարգը, վոր մենք հիմա սովորում ենք, հան-  
դես յեկալ հենց այն պատճառով, վոր մարտում շատ  
ուժեղ կերպով սկսեցին ճրճառալ զնդացիրները : Հենց այդ  
եպատճառը, վոր մենք «տեխնիկական արշավին» սկսում  
ենք զնդացիրի մասին խոսակցությունից :

Մարտիկներն արդեն ավելի մեծ հետաքրքրությունը սկսեցին լավ տնտղել իրենց գնդացիրները:

— Զեզ լավ Հայանի յեւ, — շաբունակեց վեշտի հրամատարը, — զնդացիք ինտևակի շատ եղոր տեխնիկական միջոցն եւ, այսինքն զորքերի այն տեսակի, զոր զինված ուժերի հիմքն եւ կազմում : Յեթե Հրացանաձիգը պետք եւ վորոշ ջանք ու ժամանակ դործադրի, վրանսզի նորից լցնի Հրացանը ու արձակի, ամեն անդամ Հրացանը մարտական վոտքի վրա դնելով, զնդացիքն այդ ամբողջ աշխատանքը կատարում եւ ավտոմատորեն, այսինքն իրեն, վորի համար ողտազործվում եւ յետահարվածինքը ուժը : Այն ժամանակամիջոցում, յերբ Հրացանաձիգը ճ գնդակ եւ արձակում, ձեռքի զնդացիքը մինչև հարյուր հիսուն զնդակ եւ արձակում, հաստոցավոր զնդացրի մարտական արագածգությունը տալիս եւ 250, բայց կարող եւ մեկ րոպեյում արձակել 600 զնդակ, յեթե չհաշվենք նոր ժապավենի լցնելու ժամանակը :

Այսպիսով, յերբ հետեւլակին զնդացիրներ տվին,  
նրա կրակի ուժը շատ անդամ ավելացավ: Գնդացիրների  
չորրորդիվ, հետեւլակին սկսեց ալիքի մեծ համառությամբ  
կուլիվ մղել, հատկապես սպաշտականության ժամանակի:  
Ներկայումս, որինակի համար, շատ մեծ ջանք պիտի  
թափել հետեւլակին դուրս չպրուելու համար, յեթե նա  
կարողացել և լավ ոգտագործել տեղը և խրամատավոր-  
վել:

Գնդացիրների մարտական հատկությունները շատ  
լավ հաշվի յեն առնվել գեռ իմակերիալիստական պատե-  
րազմի ժամանակի: Բոլոր բանակների հետեւակը զինվել  
և գնդացիրներով մինչև հաղեցումը: Այդ ինչ են նշանա-  
կում, ինչու բանակը չի կարելի անվերջ հագեցնել

գնդացիւներով։ Զե վոր ժարտի վախճանը վորոշվում է սպինով, ձեռնամարտով։ Խոկ զբա համար հարկավոր և մարտիկ ալինը հադրած հրացանով, հարկավոր և հրացանածիք։ Ուրեմն հետեւակի մարտական հղորությունը պետք է ուժեղացնել գնդացիրներով այն հաշվով, վոր հետեւակը պահպանի իր դյուրաշարժությանը և հարված հասցնելու ընդունակությունը։ Այժմս հետեւակը զինված և գնդացիրներով այնքան, վոր յեթի զնդացիրների քանակն ավելացնենք, այդ միայն կթուլացնի նրա հարվածը և կպակասեցնի նրա դյուրաշարժությունը։ Այստեղ ողնության հասան ձեռքի կամ թեթել զնդացիրները։ Նրանց չորհիվ, հետեւակն ուժեղացրել և իր մարտական հղորությունը, պահպանելով միևնույն ժամանուկ իր դյուրաշարժությունը։ Առաջներում հետեւակն ունենալ միմայն ծանր գնդացիրներ, ինչպես Մաքսիմի սիստեմի այս հաստոցավոր զնդացիրն է։ Վո՞քան և որա կրակի հասողությունը, ընկեր Սարումին։

Ստրոմինը բարձրացավ և վստահ կերպով տրտասանեց։

— Հաստոցավոր գնդացրի գործոն կրակը մինչև 1000 մետր և, նշանոցով կարող է կրակ վարել մինչև 2300 մ., խոկ անկյունաչափով նաեւ մինչեւ 4 կիլոմետր։

— Ինչպես տեսնում եք, զնդացիրները հրաձգության հասողությամբ քիչ են պակաս հրետանուց։ Նրանց կրակի դիպուկությունը նույնպես մեծ է։

— Այդ եր պակաս, վոր հաստոց ունենա ու դիպուկ չլինի։ Նկատեց հրաձիգներից մեկը, — այդ նույնն է, յեթե շարունակ կրակենք «պառկած, հենարանից»։

— Հենց այդ է։ Դրան ավելացրեք արագաձգությունը՝ 250 զնդակ մեկ րոպեյում։ այդ հավասար է 50 զրտ-

ձիդների, այն ել այնպիսի հրաձիգների, վորոնք հմուտ են, իդուր չե, վոր հաստոցավոր զնդացիրը համարվում է հետեւակի ամենահզր կրակային միջոցը։ Այլա, ինչու համար կարիք յեղալ ձեռքի զնդացիրներ ունենալ, — Մաքսիմը ծանր է։ Զի կարող այն տեղ մեր յերկայից հասնել։

— Զայներ լովեցին։

— Ճիշտ է։ 64 կիլոդրամմը, վորը նրա քաշն է, համար չե։ Խմակի բիալիստական պատերազմի ժամանակ, յերբ հետեւակը միմիայն ծանր գնդացիրներ ուներ, հարձակվողի համար շատ դժվար եր կոխիլ մզել պաշտպանության կրակի դեմ։ Ծանր զնդացիրները յետ ելին մնում հրաձիգներից, ուշանում ելին պաշտպանել չարժում և ողնել գրոհին։ Այն ժամանակ ողնության հասան այնպիսի զնդացիրները, ինչպիսին Շոշի և Լյուիսի գնդացիրներն են։ Թեպետ նրանց կրակի արագությունն ու հասողությունը շատ պակաս է, քան ծանր գնդացիրներինը, բայց դրա փոխարեն նրանց քաշը 14 զնդացիրներինը, բայց դրա փոխարեն նրանց քաշը 14 կիլոդրամից ավելի չե։ Զեռքի զնդացիրները, ամենուրեք շարժվելով հրաձիգների հետ, հարձակվողին խոչըն ողնություն ելին ցույց տալիս պաշտպանության դեմ կրակային կափկ մզելու դործում։ Սրանից համանալի յի, վոր բոլոր բանակները ձգտում ելին շատ լավ թիթեվ զնդացիր ունենալ։ Այդ խնդիրը հասարակ խնդիր չե։ զնդացիր ունենալ։ Այդ խնդիրը հասարակ խնդիրը մինչև վոր կարիք յեղալ յերկար ժամանակ աշխատել, մինչև վոր վերջապես բոլոր բանակներում հանդես յեկան այնպիսի ձեռքի զնդացիրներ, ինչպես Դեղտյարեկի սիստեմի մեր ձեռքի զնդացիրներ, ինչպես Դեղտյարեկի սիստեմի մեր զնդացիրը։ Ապա, զնդացրաձիգներ, ծանոթացրեք մեղ ձեր նոր ընկերոջը։

Ասացեք, ընկեր Ռեշետնիկով։

Ա լատանի Լին ջոկի Հրամատաւաբն իրմն սպասել առավ.

—Դեպայարելի սիստեմի ձեռքի գնդացրի քաշն և 7,1 կիլոդրամ : Նրա մարտական արագածությունն եւ մինչև 150 գնդակ մեկ բովելում : Կրակի նշանոցային հասողությունն եւ մինչեւ 1.300 մետր, դործոն կրակը մինչև 800 մետր :

, — Ճիշտ է : Դրան մնում եւ ավելացնել, վոր մեր ձեռքի դնդացիրը վուշ միայն պակաս չեւ արատասահմանի գնդացիրներից, բայց նրանցից շատերից բարձր է : Տակտիկական պարապմունքների ժամանակ ձեռք բերած ձեր փորձից գուշ ինքներդ դիմեք, թե ինչպիսի պահանջներ են ներկայացնում գնդացիրները մեր զաշտային աշխատանքներին : Ապա, ընկեր Դրույդն, — զարձավ նա զեսի Ա դասակի 4-րդ ջոկի հրամատարը, — հիեցրեք մեզ, թե ինչու վերջին պարապմունքների ընթացքում հարձակման ժամանակ յես կտնինեցրի ձեր ջոկը : Զե վոր ձեր մարտիկները լավ ելին քողարկվել, շատ հաջող կերպով հարձարվում ելին վայրին, իսկ գուշ հարձակումը վարում ելիք մեծ թափով, վաղեգազը կտարելով : Վերջապես ձեզ Հաջողվեց ձեր ջոկը գուրս բերել հակառակորդի ձեռքի գնդացրի թիվը : Բայց ինչո՞ւ, չնայած այս բոլորին, յես հարկադրված ելի կանոնեցնել ձեզ :

— Հենց այդ պարապմունքի ժամանակ յես խայտառակիցիք : Խոսեց լայնաթիկունը Դրույդնը, — Հանկարծ պարզվեց, վոր իմ ջոկը գտնվում եւ ուղարկի ծածկորդի վրա, այսինքն մի ուղիղ գծի վրա, վորը կաղմում ելին՝ յերկրորդ ջոկը, վորն ինձ ոգնում եր և իմ կողմից գրուցով կեար : Հենց դրամով ել յես ինձ դրկեցի կրակային ողնությունից, վորովհետեւ գնդացիրը չեր կարող

կրամի վարել իմ ջոկի մարտիկներին հարվածելու վահանաւճառով :

— Իսկ յեթե յես ձեզ չկանգնեցնելի, ու զուք այլու պիսի գրույամբ ձեր ջոկը գրոհի շարժելիք, ինչո՞վ այլ կարող եր վերջանալ :

Դրույդին իր չուրջը նայեց եւ, գտնելով հինգերորդ ջոկի հրամատարին, ասեց :

— Դրա մասին Միրովինը կարող ե ինձնից լավ պատճել :

Դրույդին իսուքերի պատասխանն եր բոլորի միաբերան ծիծաղը : Ծիծաղը նաև վաշտի հրամատարը, հիշելով, թե ինչպես Միրովինի ջոկը հարձակումից տարվեց, բայց վրա տվալ գեսի հարձակվողի գնդացրի ժակատը ու նրան գրոհեց : Մարտիկները չափազանց հակատը և նրան գրոհեց : Հայտնեցին, վոր նրանց զարմացած եյին, յերբ նրանց հայտնեցին, վոր նրանց ամբողջ ջոկը վաղուց եւ գնդակահարված հենց այն ջոկի ամբողջ ջոկը վաղուց եւ գնդակահարված հենց այն ջոկի աղողմեց, վորին նրանք այդպիս խիզախ կերպով գրոհելու հետո :

— Պատմեցիք, պատմեցեք, ընկեր Միրովին : ասեց վաշտի հրամատարը, — այստեղ բանն ինչո՞ւմն եր,

— Հոգնեցրի յես իմ տղաներին, տարվեցի և նրանց արա ուղղակի գնդացըրի վրա : Հենց դրանով ել խայտառակիվեցի... արագ պատասխանեց յերբեք չհուսահատող Միրովինը :

— Այդ ո՞ւմ հետ չի պատահում :

— Միաներ անելով սովորում ենք :

— Մենք դեռ կապացուցենք : Ձեկը մյուսի յետելիք գոռում եյին Միրովինի ջոկի մարտիկները, վորոնք միշտ համառորին պաշտպանում եյին իրենց ջոկի հրամատա-

— Մենք Միքոչենի հետ սրի ու հրի բերանը կդառնք, —  
աշխատում եր մյուսներից ավելի բարձր գոռալ կրու-  
տով :

— Այսպես, ընկերներ . . . հանգստացրեց լողներին  
վաշտի հրամատարը, — Դուք ինքներդ ել տեսնում եք, թե  
ներկայում մարտում ինչպիսի տեղ ե բռնում զնդացիրը :  
Մեր յուրաքանչյուր բայլը կալված ե զնդացրից, քե  
մեր, փառ պաշտպանում ե շարժումը և ապահովում ե  
գրոհը, ու քե հակառակորդի զնդացրից : Ավելի հաջող  
գործելու համար, մենք ներկայում հասուեկ մարտա-  
կարդ ենք կաղմում : Այժմ, յերբ շատ զնդացրներ հան-  
գես յեկան, մարտիկները ցրված են սմբող դաշտի վրա  
փոքրիկ խմբակներով և գործում են նորացած մարտա-  
կարգով : Ինչո՞ւ համար ենք այդպիս անում :

Վորպեսզի ֆիչ կորուսներ կրենք . . . բոլորի փո-  
խարեն պատասխանեց Միքոչենը :

— Ելի ինչի՞ համար . . . հարցրեց վաշտի հրամատա-  
րը : Ասեցեք, Դրուզին, դուք այդ պետք ե լավ հեշեք :

— Վորպեսզի հնարավորություն տանք մեր զնդա-  
ցիրներին կրակ վարել ջոկերի միջև յեղած արանքներով :

— Ճիշտ ե : Ուրեմն մեր մարտակարդը թելադրված  
ե մեզ զնդացիրների կողմից : Ինչպես տեսնում եք, գրն-  
դացիրները հիմա շատ պատվավոր տեղ են բռնում : Ապա  
տեսնենք, թե ինչպես պիտի իրեն պահի մարտում հրա-  
ցանաձիգը : Ամենից առաջ սկսենք զորաշարժից : Որի-  
նակ, վաղեվազքը : Ապա, ընկեր Պէյուկին, պատմեցնեք  
մեզ, թե ինչու այդ թեմայի շուրջը ձեզ հետ մյուսներից  
ավելի հաճախ ե հարկ լինում խոսել :

Բոլորը ժպիտաը յերեսներին դարձան Պէյուկինի կող-  
մը, փորի դանդաղաբարժությունը տակտիկական պա-

րապմունքների ժամանակ մշտապես հրամատարների  
նկատողությունների պատճառ եր դառնում :

Պէյուկինը բարձրացավ պատասխանի համար, բոլո-  
րուո մնաց :

— Ինչ ե, չե՞ք ուզում հանձն առնել ձեր սխալնե-  
րը . . . հարցրեց վաշտի հրամատարը :

— Վոչ, ընկեր հրամատար, — աշխուժացավ Պէյու-  
կինը, վորը դատեց, վոր յեթե ջոկերի հրամատարներն  
իրենք պատմեցին իրենց սխալները, ուրեմն իրեն ել կա-  
րիք չկա իր սխալները թագնել : Յես միայն միտս եմ  
դցում բոլոր զեպքերը, վորպեսզի վոչինչ չմոռանամ . . .

Պէյուկինն սկսեց մանրամասն պատճել իր տակտի-  
կական անհաջողությունների մասին :

— Առաջինը, վորն ինձ շատ դժվարացնում եր, այդ  
այն ե, վոր ամեն մեկը պետք ե ինքն առանձին վազե-  
մալը կատարի : Այստեղ ստացվում ե այն, վոր կամ ժա-  
մանակից չուտ ես վազում, կամ ուշ :

— Իսկ ինչու հարկ ե լինում մեկմեկ վազել, յերբ  
բոլորի համար միասին վազելը, իհարկե, ավելի հեշտ  
կլիներ :

— Իմ կարծիքով, զնդացրի պատճառով, — վրա բե-  
րավ Պէյուկինը, — առանձին մարտիկների վրա կրակելը  
զնդացրի համար ձեռնուու չե, այլ բան ե, յեթե ամբողջ  
ջոկը թիբախի նման կանոնի, այն ժամանակ զնդացրի  
համար նրան հնձելը դժվար չի լինի :

— Ահա, գենց այդ ե : Գնդացրեց վոչ միայն հար-  
կազեց մեզ մասնաւլել ըստ ջոկերի, այլ և ստիպեց  
յուրաքանչյուր մարտիկին ինքնուրույն կերպով աշ-  
խատել : Դրանով արտահայտվում ե տեխնիկայի ազդե-  
ցությունը . մարտիկն այնքան լավ վարժված պիտի լինի,

զոր, անթրամժեցաւը յան վեպքատմ, ևս միզը կը-ըստուած  
նա վճիռ ընդունել, և ամեն կերպ ոգնի իր մասի համ  
ջողությանը: Ապա ել ինչի՞ մասին կհիշեցնեք մեղ:

— Ամենից շատ յես տուժում է յի նրանից, վոր վա-  
ղելազգի համար յես միանդամեց չեյի վերկենում, —  
ավելի համարձակ շարունակեց Պյուլկինը, — ևսո շատ  
ե խոսվել վաղելազգի արագության մասին, — անպայ-  
ման գնդակի նման թռչել և միանդամեց պառկել:

— Մի խոսքով, —ամփոփեց վաշտի Հրամատարը, և  
Հիմա մարտադաշտում մարտիկից պահանջվում է արա-  
գություն ու ճկունություն։ Հմտորեն կատարած վաղե-  
վագը քողարկում և ծածկում է շարժումը, զորի շնոր-  
հիվ մարտիկն ամփելի քիչ և իրեն դնում կրակի տակ և  
ամփելի շուտ և բռնվում թշնամու հետ վճռական ձեռնա-  
մարտի, սվինամարտի... ?

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ պահանջեց դնդաշիրը հրացանաձիգից կրակ վարելու նկատմամբ։ Կարելի յեւ, արդեն ժամանակին եւ մեղադրացանաձիդներիս հանձնել արխիվը, յեթե զաշում ճշճռում են այնպիսի փոքրիկ մեքենաներ, վրոնցից ամեն մեկն իր կրակի ուժով դերագանգում եւ մեզնից մի քանի տասնյակ անդամ։

Հրաման ականջները սրբցին. լուծվում եր  
նրանց և զնդացրաձիգների միջնվ մշտապես տեղի ու-  
նեցող վեճերի հարցը, վորոնց ընթացքում զնդացրա-  
ձիգները պատրաստ եյին զիջել հրամաներին առաջ-  
նությունը ձեռնամարտի ժամանակ, բայց կրակի վերա-  
փերմամբ նրանք բավականին համոզիչ կերպով հաղ-  
թում եյին հրացանաձիգներին:

— Ընկեր Պչյուկինը ճիշտ առեց, շարունակեց  
վաշտի հրամատարը, մենք մեր մաքտակարգով

Քնուցիրնմերն մած վնաս հասցէնք, առաջ պարբեր մեզ  
բռնել ամեն մեկին առանձին, յերբ մենք ցըվել ենք ամ-  
բողջ մարտադաշտի վրա: Զե վոր կարե՞ց ե, վորքան  
հարավոր ե, շատ քայլայել հակառակորդին դեռ հեռ-  
վից ե իրեն համար հեշտացնել նրան ջախջախելը վճռա-  
վից ե իրեն համար հեշտացնել նրան ջախջախելը վճռա-  
վից ե իրեն համար հեշտացնել նրան ջախջախելը վճռա-

— Այդ մեր գործն է .— զոռացրի քրացաւութ է

— Այս, այդ հրացանարգութիւնը աւանդութիւն է կազմակերպութիւնը, ու այս գործադրութիւնը մարտադաշտում է Հիմա, ընկերներ, յերբ գնդացիւնները մարտադաշտում այնպիսի դրություն են ստեղծել, վոր նպատակները յերկուական վայրկացներով,— հրացանամիզը պես և հատկապես հմուտ հրաճգուրյուն վարի: Այդ պատճառով էլ հրաճգության ուսուցումը ներկայումս տար- վում է առաջինից միանդամայն տարրեր յեղանակով Հրացանաձիգը, մնայակերի նման, պետք է հրաչա- կերպով իր զենքին տիրապետի:

Բնդկանուր տոմամբ, ընկերսոր, այլուր և նիկական միջոցը, նոչպիսին գնդացիրն է, ամենից առաջ այն արեց, վոր մարտաղաշտում պահանջվեց այս պիսի մարտիկ, վոր հատկապես նարսիկ և զրաշարժում և հատկապես հմուտ և կրածուր յան մեջ:

Հենց այդ ուղղությամբ ել գործություն է առաջական տեխնիկան։ Տեխնիկան վու միայն չի ելացնում մարտիկի նշանակությամբ, այլ ըստիկական կը խնամ կերպով ուժեղացնում և այն պահանջները, վոր ներկայացվում են երա ֆիզիկական հատկություններին, երա ֆանտական-քարոշական ամբությամբ։

Սրանով ել մենք կվերջացնենք, իսկ մյուս անդպէ  
կդանով հրետավորների մոտ:

## Հ Ր Ե Տ Ա Ն Ի

Հրետանական գնդում հրաձիգներին դիմավորեց  
մարտկոցի հրամատարը:

— Ընկերներ, —խոսեց նա, —դուք յեկել եք ծանո-  
թանալ հրետանու հետ: Բայց վորպեսզի մենք ավելի  
լավ իրար համարնանք, նախ պատմեցեք մեղ ձեր հրե-  
տանու մասին:

Հրաձիգները մի քիչ շփոթվեցին:

— Այդ գնդի հրետանու մասին եք ասում... —  
ընդհատեց անհարմար լոռովյունը նրանցից մեկը:

— Յերևի դումարտակայինի մասին ե խոսքը...  
չարունակեց մյուսը:

— Վոչ, —առարկեց հրամատարը, —դրա մասին յես  
ինքս ել կպատմեմ ձեղ: Իսկ դուք ծանոթացրեք ինձ  
ձերի հետ:

— Մեզ մոտ բացի գնդի և դումարտակային՝ հրե-  
տանուց վոչինչ չկա:

— Ուրեմն թագանում եք, —ծիծաղեց հրամատա-  
րը, —իսկ յես շատ անզամ եմ լսել, թե ինչպես եք դուք  
գործել ձեր հրետանիով: Յեկ այդ վորոշ մարտիկների  
ձեռքում զարմանալի հետևանքներ ե տալիս. հենց վոր  
խփում ե, թիրախները ջարդումիշուր են լինում:

— Այդ մենք նոնակներով ենք անում —ձեռքի և հր-  
դացանային.

— Այս. հենց դրանց մասին ե խոսքը... —միշտուց  
հրետավորը:

— Բա, վա ենչ հրետանի յե:

— Ապա, ասացեք խնդրեմ, ինչու համար եք ձեզ  
գետ քաշ տալիս նոնակները, յերբ դուք հրացաններ ու  
գնդացիրներ ունեք... հարցը հրետավորը:

— Գնդակով թշնամուն մեջտ ել չես կարող հար-  
գածել: Յեթե նո, որինակ, նոտած և խրամատում,  
նրան այդտեղից դուրս քշել կարելի յէ միմիայն նոնա-  
կով:

— Նոնակով լավ ե գործել նույնպես անտառում և  
քակավայրերում, —ավելացրեց կրուտովը:



Նկ. 3. Ականանետ

Մի խոսքով — չարունակեց հրամատարը, — ա-  
մեն տեղ, վարտեղ հակառակրդն ոգովում և վարկե-  
ծածկարանից, դուք գործի յեք զնում ձեր նոնակները:  
Հենց այդպիսի դեպքերումն ել գործի յեն զնում հրե-  
տանուն: Նրա գլխավոր խնդիրն ե՝ նաևապարի հար-  
քել հետեւակի համար այդ նաևապարի վրայի բալոր

արքմիւթերը սրբի և, ձեր Գրացանային նունակի նման, խփել ամեն տեսակի ծածկաբնիքի շետվում քագ նըլած թշնամում, վորտեղ նրան չի կարողանում հարովածել դնդակը: Հրեանակին ունի յերկու հիմնական արկանները և շրապնիկը: Նոնակը դվասվորապես ծառայում է ամեն տեսակի արզելքներն ու ծածկաբնիքն ավերելու համար, իսկ շրապնելը—կենդանի նպատակները հարվածելու համար: Մեր նոնակը մոտավորապես նույնպիսի կազմություն ունի, ինչպես և ձեր հրեանային նոնակը: Իսկ շրապնելը բաղկացած է բարակ պատեր ունեցող պողպատե բաժակից, վորը լցված է կլոր գնդակներով. պայթումի ժամանակ այդ զնդակները գուրռ են թռչում դեռ ողի մեջ միանդամից մի ամբողջ խուրձի ձեզով:

— Իսկ ի՞նչ ե ոռոմբը.—Հարցրեց մեկը:

Ոռոմբը նույն նոնակն է, բայց ավելի մեծ քաշ ունի:

Յեթե ավերիչ արկի քաշը 16 կիլոդրամից ավելի չէ, այդպիսի արկը կոչվում է նոնակ, իսկ ավելի ծանր արկը կոչվում է ոռոմբ:

— Իսկ դուք ինչուի՞ս եք անում, կրակելով մի անդամ ավելի փոքր արկով, իսկ մյուս անդամ ավելի մեծ:

— Հիմա կրացատրեմ: Զեղ մոտ, որինակ, ձեռքի նոնակներ նետելու համար հարմարեցված է մարտիկների ամբողջ մասսան, իսկ հրացանային նոնակների համար արդեն զատված են հատուկ նոնակներ: Հենց այդպես ել մեր հրեանակն բանժանվում է մի քանի տես սակների: Բայց նախքան այդ մասին խռութեց, զուր հրացատրեմ կշրջեց ամբողջ պարկը, լավ ահանդեցեց հրանոթ-

ները ու հետո ինձ կասեք, թե ինչն է հատկապես ձեր աչքին ընկել:

Հետաքրքրված մարտիկները, ոստ ջոկերի բաժանվելով, սկսեցին հրեանական պարկի Մջագայությունը:

Բարակ ու յերկար մարմին ունեցող հրանոթների մոտով անցնելիս, կրուտովն արտասանեց:

— Սքանչելի յե.

— Այդ մեր 76 միլիմետրանոց թնդանոթներն են, նկատեց հրեանավորը:

Հրա: ոթների հետևյալ շարքն արդեն այլ տեսք ուներ. նրանց փողերը ավելի կարն ու հասու ելին, ըստ վորում նրանք ուղղված ենին մի ժիշ դիսպի վեր:

— Այդ ինչ թնդանոթներ են.—Հարցրեց կրուտովը:  
Սրա: ք թնդանոթներ չեն, այլ հորիցներ են,—ուղղեց հրեանավորը:

— Հորիցներ.—շփոթվեց կրուտովը նրանով, վոր ինքը հարլածային է ու չփառ նույնիսկ հրեանական հրանոթների առ ունները:

Պարկի լրջագայությունը վերջացնելուց հետո, մարտիկները նորից համարվեցին և լրջագայությունը մարտկոցի հրամատարին:

— Ապա ասեցեք, զուք ի՞նչ նկատեցիք.—Հարցրեց նրանց հրեանավորը:

— Միատեսակ չեն ձեր հրանոթները,—ասաց կրուտովը:—Մի քանիսը յերկար են ու բարակ, մյուսներն ավելի կարճ են ու ավելի հասու:

— Յեկ նրանց բերաները տարրեր են ուղղված, ավելացրեց Դրուզինը, —կարճ ու հաստերը, կարծեաթե, ուղրում են դեպի յերկինք կրակեն:

— Դուք ճիշտ եք նկատել, —իսուց հրամատարը:

Գլուխար առարքնաւթյունը նրանումն ու զոր վախաց երա-  
նաբներ գետնամերք են կրակում, ինչպես ձեր հրա-  
ցանը, և նրանք կոչվում են թնդանորներ, իսկ մյուս-  
ների արկր ուղղորդ հեռագծով ե թռչում, սրանք կոչ-  
վում են հորիցներ: Գետնամերք հետադիմ ունեցող  
թնդանոթով կարելի յե նախ ավելի հեռու կրակել և  
հարցածել ավելի մեծ խորությամբ: Բայց այդ թըն-  
դանոթը լավ ե բաց տեղանիքում: Յեթե հակառակորդը  
տեղավորվի լեռնակի յետեվում կամ խանդակում, այդ  
դեպքում մեր թնդանոթի արկը նրան չի դիմշիլ: Այդ-  
պիսի գետքերում հարկավոր ե հորից, վորն իր արկն  
ուղարկում ե ուղղորդ հետագծով: Այսպիսով, ընկեր-  
ներ, մենք ձեզ հետ պարզեցինք, վոր հետանին ունի  
յիրկու հիմնական տեսակի արկեր—նուհակ և շրապնիլ  
և յերկու հիմնական տեսակի հրանոթներ—թնդանոր-  
ն հորից:

Մենք իրետակորմներս ձեզ—հետելակների հետ միա-  
սին զործում ենք ձեռք ձեռքի տված: Մարտում միմ-  
յանց ողնությունն հասցնելը ձեր ամենակարեվոր խըն-  
դիրն ե: Հրետանին—այդ ձեր զենքն ե, այդ պատճա-  
ռով ել հրետանին մտնում ե զորքական միավորություն-  
ների կազմի մեջ:

Բուրք բանակներում հրետանու գլխավոր մասսան  
կազմում են թնդանոթներն ու հորիցները, վոր զուք  
տեսաք մի քիչ առաջ: Այդ այսպիս կոչված դիմիքիա-  
կան նրետանին ե կամ թերեկի դաշտային երետանին:  
Դրա մեջ մտնում են թնդանոթներ, վորոնց ամենանոր  
ափաբանները կրակում են մինչև 8-9 կիլոմետր հեռավո-  
րության վրա, մոտ 7 կիլոգրամմ քաշ ունեցող արկե-  
ռով, և հորիցները՝ մինչև 7,6 կիլոմետր հրաձգության  
նորոգությամբ և մինչև 22 կիլոմետր առաջ

4

արկով ժենթե գաշտային գրեստանու թերթին Ա: Առա-  
վածել կենդանի ուժը, վաշնչացներ լարափակերը և ա-  
վերել փոքր ամրությունները:


Սակայն այն ամենը, ինչ վոր արգելք և Հանդիսա-  
նում հետեւակի ճանապարհի վրա, չի կարելի ջարդել  
և ավերել: Հենց դուք ել ձեր հրացանների և գնդացիր-  
ների կրակով չեք կարող հարվածել ամեն տեսակի նպա-  
տակները: Դուք աշխատում եք հարվածել այն, վորն  
ավելի կարեւոր ե: Մարտական հրածության արվեստն  
ել, ի միջիայլոց, հենց նպատակների ընտրությունը  
խելացի կերպով կատարելու կարողությունն ե: Կարե-  
վոր ե, վոր հրետանին ել իր կրակով վրա տա այն ժա-  
մանակ և այնտեղ, յերբ և վորուն այդ հարկավոր ե  
ձեզ—հետեւակին: Իսկ ինչպէս իմանաս, թե ձեզ մանա-  
վանդ ի՞նչ ե հարկավոր:

— Հեռաղիտակով (բինոկուլ) կտեսնենք,—նկատեց  
Պէյոլիինը:

— Մասամբ այդ այդպիս ե,—Համաձայնվեց հրետա-  
վորը—Մենք ուշիուշով հետեւում ենք մեր դիտուկե-  
տերից՝ ձեր յուրաքանչյուր քայլեն, դիտում ենք թշնա-  
մուն, հաշվում ենք, թե ի րան վորտեղ պիտի ճնշել մեր  
կրակով, և այդ բոլոր զործողություններով մենք իսա-  
կապես ողնում ենք ձեզ: Սակայն վորպեսզի հնարավոր  
լինի հետեւել ամրող մարտի ընթացքին, մենք պետք ե  
ձեզնից մոտիկ լինենք, մոտիկ լինենք այն զորամասն,  
վորին ողնում ենք: Հետեւակ զնդերին, որինակ, տրը-  
վում են 76 միլիմետրանոց թնդանոթներ: Այդ ձեր  
գնդային իրետական բաժնյակներն են: Նրանց թնդա-  
նոթները նույնպես 76 միլիմետր արամաշափի յեն,  
բայց կարող են կրակել մինչև 6 կիլոմետր զետեսմերը

85


և գաղաթնահար կրակով, ինչպես Հռոբիցները : Նրանք շատ ավելի թեթեվ են դիվիզիական թնթանոթից, և 5-ր մարտիկ կարող են նրան ձեռքով տեղափոխել նույնիսկ վարած դաշտով: Այդ պատճառով ել նրանք միշտ ձեղ հետ են ինչպես ձեր գնդացիրները, և ուղեկցում են հետեւակին, իրենց կրակով ողնում են հետեւակին իր ինդիբները կատարելու դործում: Սակայն գնդային հըմբետնին չի կարող բուռովին կոտրել թշնամու դիմա-



#### U. 4. *Quagmire* [P] *quagmire*

**ՊՐՈՎԵԺՅՈՒՆԸ:** Այդ պատճառով գումարտակներն ունեն իրենց գումարտակային հրետանին, վորը մարտում դը-նում և ամեն տեղ հրածիդների հետ միասին։ Դա կոխվ և մզում հակառակորդի զնդացիրների դեմ, յերբ նը-րանք անսպասելի կերպով կրակ են բացում գումարտա-կի ճանապարհների վրա, պաշտպանում և զրահամեքե-նայի կամ տանկի հանկարծակի հարձակում։ Եթից ։ Ընդ-հանուր առմամբ այնպիսի խնդիրներ և կատարում, վա-


բ վիճակի չեն արտք հաղթահարել մարտի ժամանակի վուշ գնդային, զոչ ել ևս առավել դիվիդիական Հըրետանին։ Բանակներում մեծ մասամբ դուռմարտ կային հրետանին ունի 37 միլիմետրանոց քիղանոքներ փոքր նոնակով, վորը հաջողությամբ խփում է մինչև մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա, և ականանեաներ մեծ ամերիչ ուժ ունեցող արկով, վորի քաշն է 23 կիլոքրամ։ Ականանետի գործողության հասողությունն



#### Ակ. 5. Գումարատակային թվադաստեղծ

եսովորաբար մինչև կես կիլոմետր : Ներկայումս ամեն  
տեղ մշակել են փոքրակալիքը հրանոթների նոր տի-  
պարներ, ըստ վորում ավելացրել են նրանց հեռահա-  
րությունը, արագածդությունը և ալերիչ ուժը : Այդ  
հրանոթները կարելի յե քանդել, առանձին մասերի բա-  
ժանել, վորը մեծ չափով հւշտացնում ե նրանց ձեռքով  
տանելը : Քանդելն ու հավաքելը շատ քիչ ժամանակ ե  
պահանջում :

Զորական հրթուանին ևս մեկ տիպարի ծրանութներ առնի, Այդ ծանր դաշտային հրետանին և, վորը սովորաբար տրվում է կորպուսներին: Ամենանոր տիպարների ծանր դաշտային բնդանոքները կրակ են վարում մինչև չո 11 կիլոմետր հեռավորությամբ 17 կիլոգրամ քաշի արկով: Դաշտային տիպարի ամենանոր ծանր հո-



Նկ. 6. Շատրված շատ ու թթվագոր հորեցը յերթական գրությամբ

թիցները կրակում են մինչև 7,6 կիլոմետր հեռավորությամբ 40 կիլոդրամմ քաշի արկով:

— Այդ քանի՞ փութ և, ընկեր, Հրամատարը հաճակարծ հարցուց կարմեր բանակայինին, վորն այդ ըստեղին ուշադրությամբ տնտղում եր կարմրած կոշիկը:

— Վերկաց, Պէտրիկին, վերկաց, քեզ են հարցնում: Խիստ կարմրած Պէտրիկինը վերկացավ, բայց վոչ մի խոռք չարտասանեց:

— Յերեք փութ, հրան հուշեցին յետելից:

— Նստեցեք, ընկեր Պէտրիկին, ասաց հրամատարը

— Ա կիսովրամբ թեղին և յերեք դրութ չե, բայց ոչը բան մասե—յերկու ու կես —ութ ե: Սակայն հրանոթների այդ նորադույն տիպարները, վորոնց մասին յետասացի, սպառազինման մեջ կմտնեն աստիճանաբար միամիայն պատերազմի ժամանակ: Այժմս բանակներում մեծ ժամանք ծանր հրետանու բնդանոքները կրակում են 12,5 կիլոմետր հեռավորությամբ, իսկ հորեցները — 7,5 կիլոմետր. ծանր դաշտային հրետանին ծառայում ե հեռավոր նպատակներ ոմբակոծելու և այնպիսի ամրություններ ավերելու համար, վորոնք դիվիզիական նրետանու ուժերից վեր են:

Այսպիսով հրետանին բաժանվում ե՝ գումարտակային, գնդային, դիվիզիական ու կորպուսային հրետանու: Հրետանական խնդիրների մի մասը դուք ինքներդ եք կատարում, հակառակորդի վրա նետելով ձեր ձեռքի նոնակները ու հրացանային նոնակները մեծ հեռավորություններից, հետո զալիս և արդեն գումարտակային հրետանին, ապա գնդային, դիվիզիական ու կորպուսային հրետանին: Պետք ե, վոր դուք միանդամ և ընդմիշտ հիշեք, վոր հրետանին ձեր գենքն ե: Այդ կարևոր ե հիշել նրա համար, վորպեսզի ձեռք բերենք հրետանու և հետեվակի ու հեծելազորի համաձայնեցարած և համերաշխ աշխատանքք: Ենթե հրետանու դործողությունները սերտորեն կապակցված չեն հետեվակի դործողությունների հետ, այդ դեպքում հրետանին, ինչպես ասում են «զատարկ բան ե»: Միմիայն յեռուն համերաշխ և միասնական աշխատանքի ժամանակ ամեն մի արկն իսկապես մեծ ողնություն կհասցնի հետեվակին՝ թշնամուն ջախջախելու դործում: Աերտ համադործակցությունը հատկապես կարեւոր ե հիմա, յերբ հետեւակի սպառազինված ե մեծ ժանակաւթյունը զնդա-

ցիներով, վորոնց դեմ ամենալավ միջոցն է Հրետանին։ Հենց այդ պատճառով ել, վոր մարտադաշտերում շատ գնդացերներ են հանդես յեկել, հետեվակն այժմ ունի իր գնդային և գումարտակային հրետանին, վորն առաջներում բոլորովին գոյություն չուներ։ Մենք, հրետափորներս, առանց ձեզ մարտում վոչինչ չենք կարող անել, վորքան ել դիպուկ կրակենք։ Սակայն հետեվակն



Նկ. 7. Թողարկած հրանոթ

ել առանց հրետանու չափաղանց մեծ կորուստներ կունենա։ Ուստի սովորեցեք լավ ողտադործել ձեր հրետանուն։

Շատ կարևոր ե, վորպեսզի մարտում մշտապես ամենասերտ կապ լինի հետևակի ու հրետանու միջև։ Դրա մասին պետք ե Հոգ տանեք նաև դուք։ Միշտ աշխատեցեք իմանալ, թե վորտեղ ե գտնվում ձեր մարտակոցի առաջավոր դիպովը, վորպեսզի նրա միջոցով միանդամից փոխանցեք ձեր մարտական պատվերները հրետափորներին, ինքներդ ձեզ այնպես պահեցեք։

Վոր Նրա ուեղը և Հրետանու կրակային դիրքերը բաց չանեք հակառակորդին, և պահպանեցեք հրետանական կապի լարը։ Յերբեք միք վախենա ձեր Հրետանու կըրակից։ Բնդ հակառակը աշխատեցեք, վորքան հնարավոր է, փոքր լինի, վորպեսզի հակառակորդի հետ



Նկ. 8. Ծավ ավնյա պտշոպանության 16 մատնաչափանց հրանոթ


ավինամարտի բոնիկեք միանդամից մեր նոնակների ու շրապնելների տակից։

Հրետանու կրակային ուժը շատ մեծ է։ Տեխնիկայի անման հետ միաժամանակ նրա հզորությունը վերջին ժամանակ շատ ավելացել է։ Սակայն այդ բոլորը վերջիվերջո ուղղված ե նրան, վոր հրաձիգը կամ հեծելակը կարողանան հաջողությամբ կովել, չնայած մեծ քանակության գնդացերների կրակին։

Հակառակորդի հրետանական կրակի տարափեն

Հանդիպելիս, միշեցիք, վոր ռոտբերի ոչ շրագնեների տմբողջ գղրդոցը միմիայն ծածկում և թշնամու իւս կական ուժը—նրա հետևակին։ Դուք ինքներդ եւ, հենավելով ձեր հրետանու կրակի վրա, նույնակես չմոռանաք, վոր այդ միայն ողնություն և հասցնում ձեզ, իսկ մարտական վեճը վերջնականապես վորոշվում և ձեր սպինով։

Ճիշտ ե, կա նաև այնպիսի հրետանի, վորը վոչ մի դորական միավորության մեջ չի մտնում։ Այդ ծանր



Նկ. 9. 14 մասնաշափան և ց հրանոթ յերկաթուղային հաստաբանի վրա։ Փփելու հաստաբանուն և Յօ կմ։

Երեսանին ե. դա ոմբակոծում և հատկապես կարեոր կետերը և ավելում այնպիսի ամրությունները, վորոնք դաշտային ծանր հրետանու ուժերից վեր են։ Այդպիսի հրետանու թնդանորթները կրակում են 23 և կես կիլոմետր հեռավորության վրա մինչև 52 կիլոդրամ քաշի արկով։ Հորիցները կրակում են 17 կիլոմետրի վրա 20 կիլոդրամ քաշի արկով։ Ել ավելի ուժեղ հրանոթները կրակ են վառում արդեն յերկաթուղային հաստարաններից։ Նրանց կրակի հասողությունն ե՝ մինչև 50 կիլոմետր։ Վերջապես, այսպես կոչված գերհեռահար հրանոթներն ուղարկում են արկը մինչև 200 կիլոմետր հեռավորության վրա։

Սակա շարժում նկատնուն լողաբերի վեչ, պրետա-վորն ասաց։

— Միք զարմանալ, ընկերներ Այդպիսի հրանոթներն արդեն յեղել են համաշխարհային պատերազմում։ Բայց նրանք կիրառվեն հազվադյուն գեղքերում, շատ են թանգ արժենում։ Համենայն դեպս կովի վախճանի վճռական նշանակությունը պատկանում է ձեզ—հետևակին։ Զեր հաջողություններից կամ անհաջողություններից կախված է հաղթությունը կամ պարտությունը։ Իսկ հետևակների գործն ե՝ բոլոր ուժերով ողնություն հասցնել ձեզ։ Յեկեք, ընկերներ, ավելի սերտորեն, ձեռք-ձեռքի տված աշխատենք իրար հետ։ — Վերջացրեց մարտկոցի հրամատարը, ձեռքը մեկնելով Մերովինին, — Երդ կրածիկ ջոկի հրամատարին։

## Զ Ր Ա Շ Ս Պ Ա Տ Ո Ւ Ժ Ե Ր

### Զ Ր Ա Շ Ա Գ Ի Ա Ց Ք Ն Ե Ր

Վաշտը ուերտ ողակ կազմած ցրծապատել եր հրամատարին և քաղղեկին։

— Հիմա ուրեմն տանկիստների մո՞տ։ Հարցրեց մարտիկներից մեկը։

— Առաջինը կընանք զրտհազնացքը տեսնելու, ո՞նց կատեց վաշտի հրամատարը։

— Դեհ, նրանում ի՞նչ կա, — դժողովությամբ ասաց Միրովինը, նրանից ինչ կովող դուրս կդա։ Անոպայման ուելսեր տուր նրան, վոր զնա։

— Այդ վոշնչ, վոր զրահազնացքը կապված է ոելունին, — ծիծաղեց քաղղեկը, վորը քաղաքացիական պատերազմի ընթացքում ինքն աշխատել եր զրահատնացքի վրա։ — Ձիչտ ե, նու կիրառված և միմիայն

յերկաթգծի վրա։ Բայց բանը նրանումն եւ, ընկերներ, վոր յերկարուղայինները պատերազմում ահազին նշանա կուրյուն ունեն։ Կարելի յեւ ձեզանից մեկն ինքը պմի կընկնի, թե այդ ինչու յեւ այդպես։

— Յերկաթուղիններով բանակի համար քերում են փամփուշտներ, արկեր, ուտեստի մթերքներ—պատասխանեց Ստրոմինը։

— Ճիշտ ե, — հաստատեց քաղղեկը, բայց այդ քիչ ե, յերկարուղինները ծառայում են հենց զորքեր փոխադրելու համար։ Իսկ այդպիսի փոխադրությունների վրա կառուցվում ե բանակի զորաշարժք։ Հաշվի առնեք նաև այն, վոր յերկրի տնտեսությունը մերսորեն կապված ե յերկարուղինների աշխատամեջի հետ։ Իսկ յերկրի տնտեսական վիճակից կախված ե նաև բանակի մարտական աշխատանքը։ Չե վոր փամփուշտները յերկնքից չեն թափվում—յերկրի համար ինչ վոր անհրաժեշտ ե տալիս ե արդյունաբերությունը։

Այստեղից պարդ ե, վոր յերկաթուղինները այն հիմնական ճանապարհներն են, վորոնց վրա ծավալովում ե կոիվը։ Ահա թե ինչու, թեպես զրահազնացքը կապված ե ոելսերով, բայց պատերազմի դաշտերում նրան անզործ մնալ չի վիճակվի։ Զրահազնացքը կմասնակցի ամենատաք կոիվներին... Դեռ ժամանակն ե—դարձավ քաղղեկը վաշտի հրամատարին։ Նա շարեց վաշտը, հրաման տվալ, և մարտիկները քայլեցին։

Եերբ վաշտը կանգ առավ յերկար պողպատե տուփերի մոտ, վորոնցից գուրս ելին ցցված թնդանոթներն ու գնդացիրները, քաղղեկն առաջարկեց։

— Ողա, համեցեք, զրոհեցեք դրան։


— Թերեւս, բան չի դուրս դալ։

— Ինչ կա, վոր դուրս չի դա—սկսեցին իրար հետ վիճել հրաձիգները։

— Այո, ընկերներ, բաց զրոհել մեզ, խորհուրդ չեմ տալիս,—ձայն տվեց զրահազնացքի հրամանատարը, վորը դիմավորել եր մոտեցող ճարտիկներին։ Զրահազնացքները հենց նրանով են ձեռնտու, վոր նըստանք շատ ուժեղ են բաց ճակատամարտում։ Անսպասելի կերպով յերեան գալով հակառակորդի հենց քթի տակ, մենք ուժեղ ու շատ դիմուկ կրակ ենք բացում, վորովհետեւ մեր թնդանոթներն ու զնդացիրներն ունեն մշտական, լավ հարմարեցրած հաստարաններ։ Իսկ հակառակորդի զնդացիրների և հրացանների կրակը մեզ համար սարսափելի չե։ Ճեղ մոտ բոլոր մարտիկները ծածկված են զրահով։ Զրահազնացքները կառուցվում են այսպես։ Սովորական շողեչարժը ծածկվում ե պողպատե թերթերով։ Նույնպիսի զրահով ծածկվում են յերկաթուղային տամալները (պլատֆորմները), վորոնց վրա սարքում են աշտարակներ հրանոթներով և դընդացիրներով։ Աշտարակները չուռ են գալիս հրանոթների հետ միասին և թույլ են տալիս զնդակոծել ամեն կողմը։ Ծանը հրանոթները զրվում են հատուկ տամալների վրա։ Ծողեշարժը տենդերի հետ միասին զընում և զնացքի մեջանում, իսկ դլխում ու պոչում զնում են զրահապատ տամալներ հրանոթներով և դընդացիրներով։ Գոյություն ունեն նույնպես զրահազնեղիններ։ Դա իբր թե զրահովտոմորիլ ե ոելսերի վրա զրած։

— Ի՞նչ լուսավեր կամ դրամագիշտը  
վրա:

— Բեթե զրահաղնացքը սովորաբար սպառազին-  
ված և թեթե դաշտային թնդանոթներով յեվ գնդացիրո-



Նկ. 10. Զրահալրեզին

Աերով: Դաշտային ծանր զրահազնացքներն ունեն 103  
միլիմետրանոց հրանոթներ և գնդացիրներ: Վերջապես  
